

ԳԱԼԻՖՈՐՆԻՅԱ ՆԱՍՆԱԿԱՆ ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍ
ՀԵՏԱԶՕՏՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑԻ
ԻՐԱԻՈՒՆՔՆԵՐՈՒ ՅԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Այս իրաւունքները իւրաքանչիւր մարդու իրաւունքն են, որոնց խնդրած են մասնակցի բժշկական հետազոտական ուսումնասիրութեան: Որպէս հետազոտութեան մասնակից, ես ունիմ հետեւեալ իրաւունքները.

1. Ես իրաւունք ունիմ գիտնալու, թէ ինչ կը փորձուի յայտնաբերուիլ հետազոտութեան միջոցով:
2. Ես իրաւունք ունիմ գիտնալու հետազոտութեան բոլոր ընթացակարգերը, դեղերը եւ/կամ գործիքները, եւ արդեօք անոնցմէ որեւէ մէկը կը տարբերի գործնական պարզ սովորական գործածուողներէն:
3. Ես իրաւունք ունիմ գիտնալու իւրաքանչիւր վտանգի, անյարմարութեան կամ կողմնակի ազդեցութեան մասին, որ կրնայ հիմնաւորուած կերպով յառաջանալ որպէս հետազոտութեան արդիւնք:
4. Ես իրաւունք ունիմ գիտնալու այն օգուտներու մասին, եթէ կան այդպիսիք, որոնք ես կրնամ հիմնաւորուած կերպով ակնկալել իմ մասնակցութենէն:
5. Ես իրաւունք ունիմ գիտնալու այլ ընտրութեան հնարաւորութիւններու մասին, որոնք ես ունիմ, եւ թէ ինչպէս անոնք կրնան աւելի յաւ կամ աւելի վատ ըլլալ, քան հետազոտութեան մասնակցիւր: Այս ընտրութիւններու հնարաւորութիւնները կրնան ներառել այլ ընթացակարգեր, դեղեր կամ գործիքներ:
6. Ես իրաւունք ունիմ գիտնալու, թէ ինչ տեսակի բուժում կրնայ առկայ ըլլալ ինծի համար, եթէ հետազոտութիւնը որեւէ բարդութիւն յառաջացնէ:
7. Ես իրաւունք ունիմ հնարաւորութիւն ունենալու որեւէ հարց տալ՝ հետազոտութեան կամ ընթացակարգի մասին: Ես կրնամ այս հարցերը տալ մինչ հետազոտութեան սկսիլ կամ հետազոտութեան ընթացքում՝ երբ ուզեմ:
8. Ես իրաւունք ունիմ մերժել հետազոտութեան իմ մասնակցութիւնը կամ ուզած ժամանակ դադարեցնել այն: Այս որոշումը որեւէ այլ ձեւով չ'ազդէր իմ խնամքի կամ բժիշկի հետ ունեցած իմ յարաբերութեան կամ այս հաստատութեան վրայ:
9. Ես իրաւունք ունեմ ստանալու հետազոտութեան ստորագրուած եւ թուականով գրաւոր համաձայնութեան ձեւաթուղթի պատճէնը:
10. Ես իրաւունք ունիմ գերծ մնալու որեւէ ճնշումէ, քանի որ ես կ'որոշեմ, թէ արդեօք ցանկութիւն ունիմ մասնակցելու այս հետազոտական ուսումնասիրութեան:

Եթէ ես հարցեր կամ մտահոգութիւններ ունենամ, ես կրնամ հարցնել հետազոտողին կամ հետազոտութեան օգնականին: Ես կրնամ նաեւ կապուիլ Մարդու հետազոտութեան պաշտպանութեան ծրագրի (Human Research Protection Program (OHRPP)) UCLA գրասենեակի հետ, որ կ'օգնէ պաշտպանել հետազոտական ուսումնասիրութեան մասնակիցներուն: Ես կրնամ կապուիլ OHRPP-ի հետ՝ հեռաձայնելով 310-825-5344 թիւին, առտուայ ժամը 8:00-էն մինչեւ 17:00-ը, Երկուշաբթիէն Ուրբաթ: Եթէ ես հեռաձայնեմ այս գրասենեակ, բայց անզերէն կամ սպաններէն չեմ գիտեր, ես պետք է հետս ունենամ որեւէ մէկը, որ կրնայ թարգմանել ինծի համար: Ես նաեւ կրնամ գրել OHRPP-ին՝ 11000 Kinross Avenue, Suite 102, Box 951694, Los Angeles, CA 90095-1694 հասցէով: